— Ի՞նչ, Ապու Ջափր մեռե՞լ է:

— Այո, որդին հայրը սպաննել եւ տեղը թագաւորել է:

— Իմ սիրուն աղջիկս, այս ի՞նչ լաւ լուր ունիս, ո՞ւր իմացար:

— Ես Խոյէ կ'ուգամ. հոն այս լուրը տարածուեցաւ. քաղաքը վերջին յուզման մէջ էր. Օմարի կինը երէկ առտու ճամփայ հանեցի, երեկոյին էլ ես ճամփայ ելայ:

— Դու յոգնած պէտք է լինիս, ուրեմն քիչ մը յանգիր, ես երթամ նայիմ թէ ամէն բան կարգի՞ն է… Միայն իշխանուհի, այն զրուցէ թէ բանտապանին կինն իմացաւ՞ ամիրապետին մահը:

— Ինչպէ՞ս կարելի էր չիմանալ. տաճկաց շփոթութիւնը մեծ էր. ամէնքը զէնքի կը դիմէին հայոց վախեն: Ամիրան քարոզ կ'ուտար կարդալ փողոցները, որ ոեւիցէ՛ անկարգութիւն խստիւ պատժել պիտի տար: Ճշմարիտն ըսելով ես այս մեծ Չդիպուածին անտարբեր էի. վասնզի իմ նպատակս ինձ համար ամենամեծ էր:

Խոսրով ելաւ դուրս, իւր հաւատարիմներէն պարկեշտ մարդ մը պահապան գրաւ, որ ոչ ոք անհանգիստ չընէ պատանի իշխանը, եւ ինք խորհրդածելով կ'երթար մեծ օգուտ նշմարելով Ապու Ջափրի մահուամբ Հայաստանի՝ ինչպէս նաեւ Գուրգէնի ազատութեան համար: Մանաւանդ երբ կը մտածէր թէ որդին զհայրն սպաննելով թագաւորել էր, երբ ընտանեկան կապերը այնչափ խզեալ էին, երբ սէրը որդուոց եւ ծնողաց մէջեն անհետացած ապականութիւնը ուրեմն վարը եւ վերը հաւասար էր եւ անկումը մերձ, եւ Հայաստան պէտք էր ազատել, բայց Հայաստան ազատելու համար պէտք էր ունենալ իմաստ ոմն գլուխ մը, կրօնքի բարոյականին ուսուցի՛չ եկեղեցական անշահասէր եւ առաքինի մարմին մը, վասնզի ժողովուրդը դիւրաւ կրնար առնուլ բանի եւ գործս ուղղութեան դրոշմը եթէ գտնուէր լաւ եւ արժանաւոր ձեռք եւ օրինակ: